ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 31 » օգոստոսի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-36/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2016թ. թիվ 1/73-3/7667-16 և 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրություններով ներկայացված «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02701432) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարության 22.05.2015թ. թիվ 10/27/6133-15 և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 26.05.2015թ. թիվ 01/29-793 գրությունների հիման վրա համապատասխանաբար՝ 12.02.2016թ. թիվ 1/73-3/4940-16 և 01.03.2016թ. թիվ 1/73-

3/7667-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված կազմակերպությանը Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարության 22.05.2015թ. թիվ 10/27/6133-15 և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 26.05.2015թ. թիվ 01/29-793 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ին ներառելու նպատակով բողոքարկման գործընթաց:

2. «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 19.02.2016թ. թիվ 01/04.1/550-16 և 11.03.2016թ. թիվ 01/04.1/879-16 գրություններով դիմել է «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ին, սակայն պատասխան չի ստացվել:

3. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը 26.05.2015թ. թիվ 01/29-793 գրությանը կից ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել համապատասխան փաստաթղթերի պատճենները, որոնց ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 06.05.2015թ. ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն՝ 4.995.778 ՀՀ դրամի չափով:

4. ՀՀ արդարադատության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ արդարադատության նախարարությունը 22.05.2015թ. թիվ 10/27/6133-15 գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 15.05.2015թ. հարցում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը, Նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ն 08.05.2015թ. ***(հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչի արդյունքում, Ընկերության հայտը մերժվել է:

5. ՍՑ-ԳԲԽ-36/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2016թ. թիվ 1/73-3/7667-16 գրությամբ ներկայացված «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՊՏՀ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ն:
- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է,

որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (06.05.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի 06.05.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ն Ընթացակարգ 1-ի՝ 1-ին, 4-րդ, 5-րդ, 46-րդ, 49-րդ, 50-րդ, 53-րդ, 58-րդ և 68-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած, իսկ 56-րդ չափաբաժնի մասով՝ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:
- Պատվիրատու 1-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 06.05.2015թ. կատարած հարցմամբ, խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի վերաբերյալ:
- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ն 2015թ. մայիսի 6-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 4.995.778 ՀՀ դրամի չափով:
- Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի կողմից 12.05.2015թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշվել է մերժել «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի հայտը՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքով:

2. *ՀՀ ֆինանսների նախարարության 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրությամբ ներկայացված «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝*

- «ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԱՆԹԿ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ն:

• Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (08.05.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

• Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի 14.05.2015թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում կատարել 4-րդ չափաբաժնով երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից՝ «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

• «ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 15.05.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ն 2015թ. մայիսի 8-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 5.010.566 ՀՀ դրամի չափով:

• Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի կողմից 25.05.2015թ. տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության 2.1 կետով որոշվել է մերժել «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի հայտը՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքով:

5. ՍՑ-ԳԲԽ-36/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2016թ. թիվ 1/73-3/7667-16 և 22.05.2015թ. թիվ 10/27/6133-15 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ***ներկայացրել է կեղծ տվյալ***:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով***, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Ընկերությունը ***հայտի N 2 հավելվածով*** Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր

տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (06.05.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Այսպիսով, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 06.05.2015թ. կատարած հարցմամբ, խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերությունը ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 06.05.2015թ.***, ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 4.995.778 ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը ***հայտի N 2 հավելվածով՝*** Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (08.05.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատու 2-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերությունը ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 08.05.2015թ.***, ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 5.010.566 ՀՀ դրամի չափով:

Մինչդեռ, Ընկերությունն Ընթացակարգ 1-ին և Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով համապատասխանաբար՝ 06.05.2015թ. և 08.05.2015թ. ներկայացնելով հայտի ***N 2 հավելվածը՝*** փաստորեն հայտնել և հավաստել է, որ իրավունք ունի մասնակցելու գնումների վերը նշված ընթացակարգերին, ինչը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային

պարտավորություններ ունենալու պայմաններում Ընկերության կողմից հանդիսանում է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԷյՋԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով՝ Կենտրոնն արձանագրում է, որ «ԷյՋԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***06.05.2015թ.*** մասնակցելով «ՀՊՏՀ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում և ***08.05.2015թ. կրկին հայտ է ներկայացրել*** «ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների

կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՀՀԱՆԹԿ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, որի շրջանակներում ևս ներկայացրել է կեղծ տվյալ:

Այսպիսով, Կենտրոնը գտնում է, որ Ընկերության կողմից խախտվել են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, այն է՝ ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում Ընկերությունը ներկայացրել է կեղծ տվյալ, որը հիմք է «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար:***

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2016թ. թիվ 1/73-3/7667-16 և 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրություններով ներկայացված «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02701432) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-36/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան